ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

18.04.2013թ.
200-ի 8

ՀՀ նախագահի աշխատակազմի
ղեկավար պարոն Վիգեն Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից 2013թ.-ի ապրիլի 4-ին տրամադրած տեղեկանքի համաձայն՝ “Երիտասարդներ երկիր առողջապահական” եւ “Արբանյակ” իրավապաշտպան ՀԿ-ներից յուրաքանչյուրը 2011 եւ 2012թ.թ.-ի ընթացքում ՀՀ Նախագահի աշխատակազմից ստացել է ավելի քան 27 մլն ՀՀ դրամ գումարի դրամաշնորհ (http://givemeinfo.am/hy/case/1164/): “Երիտասարդներ երկիր առողջապահական” եւ “Արբանյակ” իրավապաշտպան ՀԿ-ների եւ նրանց գործունեության վերաբերյալ համացանցում որեւէ տվյալ չգտանք:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ ծրագիր իրականացնելու համար է դրամաշնորհ տրվել “Երիտասարդներ երկիր առողջապահական” եւ “Արբանյակ” իրավապաշտպան ՀԿ-ներից յուրաքանչյուրին,
2. Որտե՞ղ կամ ի՞նչ աղբյուրից կարող ենք ծանոթանալ այդ ՀԿ-ների գործունեությանը:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան